

Гр. КАПАНЦЯН, *Историко-лингвистические работы. Издательство АН Армянской ССР, Ереван, 1957*

Գր. ՂԱՓԱՆՅԱՆ, *Պատմա-լեզվաբանական աշխատություններ: Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն*

Հայերի ու հայերենի գոյացման և նախնական պատմության հարցերի լուսաբանմանն է նվիրված հանգուցյալ ակադեմիկոս Գր. Ղափանցյանի «Պատմա-լեզվաբանական աշխատություններ» ժողովածուն, որը լույս է տեսել անցյալ տարվա վերջերին:

Այդ ժողովածուի մեջ զետեղված են հեղինակի առավել արժեքավոր այն հետազոտությունները, որոնց մեջ հայերենի հարուստ փաստերի և պատմական հուշարձանների տվյալների օգտագործմամբ նոր տեսանկյունով քննարկված են ժողովուրդների ու նրանց լեզուների գոյացման հարցերը:

Հայերի ու հայոց էթնիկական լեզվի գոյացման մասին հայտնի տեսակետներից ամենատարածվածը հնդեվրոպական լեզվաբանության տվյալների հիման վրա մշակված տեսակետն է, որը առավել պարզ ձևով շարադրված է պատմաբան Հ. Մանանդյանի «Փննական տեսություն հայ ժողովրդի պատմության» ուղադրված աշխատության մեջ: Ըստ Մանանդյանի հայերի նախահայրերը եղել են հնդեվրոպական արմենները, որոնք մ. թ. ա. յոթերորդ դարում կամ վեցերորդ դարի սկզբներին Փոքր Ասիայից գաղթել են Հայաստան և հետզհետե տիրացել Ուրարտուի երկրներին:

Ընդունելով, որ հայերը կամ արմենները եղել են Փոքր Ասիայից՝ Հ. Մանանդյանը չի մխտոմ Հայկական բարձրավանդակում ապրող բնիկ ժողովուրդների կուլտուրական բարձր մակարդակը, հետևաբար՝ նաև այն մեծ դերը, որ նրանք խաղացել են ինչպես հայ ժողովրդի կազմավորման, նույնպես և հայոց լեզվի մշակման ու կատարելագործման պրոցեսում. «Արմենների թե՛ լեզվի, և թե՛ կուլտուրայի վրա, —ասում է նա,—խիստ մեծ է եղել Հայկական լեռնաշխարհի նախաարմենական բնակչության ազդեցությունը և որ այժմյան հայերի նախահայրերն են ոչ միայն հնդեվրոպական

արմենները, այլև խալդերը և Ուրարտուի տեղական այլ հնագույն ցեղերը»: Մոտավորապես նույնպիսի կարծիք է պաշտպանում պրոֆ. Հր. Աճառյանը «Հայոց լեզվի պատմության» առաջին հատորում, որտեղ գրում է. «Խալդերների ազդեցությունը անուրանալի է հայերենի վրա: Հայերենը փոխ է առել խալդերենից ոչ միայն իր սովորական բառամթերքի մի կարևոր մասը, այլև իր անձնական հատուկ անունների մի մասը և տեղական անունների ամենախոշոր մասը. Սխալ չի լինի ասել, որ եթե խալդիական արյունը շարունակում է ապրել մեր արյան մեջ և խալդիական երկիրը շարունակում է իր գոյությունը Հայաստանում, նույնպես և խալդերները շարունակում է ապրել հայերեն լեզվի ծալքերում, հայկական շրթունքների վրա»:

Պատմա-համեմատական լեզվաբանության ներկայացուցիչները և մի շարք պատմաբաններ հայ ժողովրդի պատմության սկիզբը համարում են 7—6-րդ դարերը, այսինքն՝ այն ժամանակաշրջանը, երբ, ըստ հնդեվրոպական տեսության, հայերի հնդեվրոպական նախնիները արմենները, գաղթում են Հայաստան և, հաստատվելով Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան դաշտերում ու լեռներում՝ հետզհետե տեղ են գտնում Ուրարտուի երկրներին:

Հայ ժողովրդի գոյացման մասին 19-րդ դարում մշակված և հետագայում շատերի կողմից կրկնված այս տեսությունը իրավացիորեն հերքվել է մի շարք պատմաբանների կողմից: Այդ տեսության ամենախոշոր արատներից մեկն

1. Հ. Մանանդյան, Փննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան, 1947, հատ. Ա, էջ 34:
2. Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 1-ին մաս, էջ 190:
3. Հմմտ. Հ. Մանանդյան, նույն տեղում, էջ 9:

ալն է, որ ժողովուրդների գոյացման հարցը բնագավառում է վերացականորեն, տարածությունից ու ժամանակից դուրս: Մինչդեռ ժողովուրդը, ինչպես հայտնի է, պատմական կատեգորիա է և ձևավորվում է հասարակության զարգացման որոշ պայմաններում՝ տոհմատիրական կարգերի քայքայման և դասակարգային հարաբերությունների առաջացման շրջանում, ընդհանուր տերիտորիայում ապրած ցեղերից կամ ցեղային միություններից մեկի հիման վրա: Ժողովրդի գոյացման գույզը թաց մշակվում է նաև էթնիկական լեզուն, որը աստիճանաբար ընդհանուր է դառնում ժողովրդի կազմի մեջ մտած բոլոր ցեղերի համար, ուրվագծվում են ժողովրդի սովորություններն ու կուլտուրան, ավելի սերտ են դառնում նրա տարրեր հատվածների տնտեսական, քաղաքական և նոգեկան կապերը:

Հայ ժողովուրդը ևս այդ ընդհանուր օրինաչափությունից դուրս չի մնացել: Նա, իբրև հասարակական այդպիսի խմբավորում, ձևավորվել է ալն տերիտորիայում, որտեղ ապրել են նախահայկական ցեղերը, որոնք թեև պատմական տարբեր շրջաններում գտնվել են խեթական կամ ուրարտական թագավորությունների կազմի մեջ, բայց միշտ պահել են իրենց ինքնուրույնությունը և մշակել են իրենց լեզուն: Հայկական այդ հնագույն ցեղերի մասին եղած գրավոր հիշատակությունները չորս հազար տարուց ավելի հնություն ունեն: Այդ ցեղերից են ամենից առաջ հայասցիները, որոնք զբաղեցրել են Հալիս, Իրիս, Գայլ գետերի և արևմտյան եփրատի ավազանները, արիմ-արմե հայկական ցեղերը, որոնք կենտրոնացած են եղել Հարափային Կապադովկիայից մինչև Սասնա լեռների հարավ-արևելյան ստորոտները՝ ընկած շրջաններում: Վերջինների մասին ընդարձակ տեղեկություններ կան մեզնից երեսուներեք դար առաջ գրված ասուրա-բաբելական արձանագրություններում:

Մեր թվականությունից երկու հազար տարի առաջ սկսում է հայկական ցեղերի միավորման, իսկ մի փոքր ավելի ուշ, Հայկական լեռնաշխարհում եղած հին պետությունների քայքայման հոգի վրա՝ հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը, որը ավարտվում է հելլենիստական էպոխայում:

Հայկական ցեղերի միավորման և հայ ժողովրդի կազմավորման ավելի քան երկու հազար տարի տևող պրոցեսն ունեցել է իր զիգ-դագները: Հայկական ցեղերը բազմիցս ստիպված են եղել վերաշինելու տարբեր ցեղերի հրոստակամբերին գոհ դարձած դուռներն ու քաղաքները, վերստեղծելու իրենց մշակույթը, պայքարելու իրենց գոյության համար:

Հայ ժողովրդի և հայոց լեզվի պատմության հնագույն շրջանի ուսումնասիրությամբ շատ բնական է զբաղվել: Նրանց մեջ առանձնապես աչքի է ընկնում պրոֆ. Գր. Ղափանցյանը, որը բոլորից ավելի բազմակողմանիորեն է ուսումնասիրել հայերի և Հայկական լեռնաշխարհում բնակվող այլ ժողովուրդների կուլտուրա-պատմական և լեզվական կապերը: Երկար տարիների պրպոսումների ընթացքում նրան հաջողվել է հայանագործել այդ ժողովուրդների լեզուների և հայերենի գույզադիպումների բազմաթիվ փաստեր, և նոր տվյալներով հերքել հայերի գաղթի և նրանց՝ մ. թ. ա. 7—6-րդ դարերում Հայկական լեռնաշխարհում հաստատվելու տեսությունը: Գր. Ղափանցյանը ուղադրավ տեսակետներ է հայտնել ժողովուրդների գոյացման, լեզվի և ժողովրդի պատմության կապի, ինչպես նաև հայ ժողովրդի կազմավորման հարցերի մասին: Պաշտպանելով փուլագրերի և հայերենի առնչակցությունների մասին Ա. Մեյլերի և Հր. Աճառյանի տեսակետները, պրոֆ. Գր. Ղափանցյանը նշում է, որ հույն պատմիչների՝ Հերոդոտի, Եվդոքսոսի և ուրիշների վկայությունները արմենների փուլագրական ծագման մասին ստույգ չեն: Հույն պատմիչները ձգտել են Մերձավոր Արևելքի շատ ժողովուրդների, որոնց թվում նաև հայերին, կապել բալկանյան ժողովուրդների և հատկապես հույների հետ, և դրա համար նրանք հաճախ չհիմնավորված կարծիքներ են հայտնել զանազան ժողովուրդների ծագման մասին: Մեյլերն նշել է, որ փուլագրերի տվյալները բավական հիմք չեն տալիս հայերեն փուլագրերին մերձակից համարելու կամ միևնույն ճյուղի մեջ դասավորելու համար: Փուլագրերն իբրև հնգվորոպական լեզու ավելի մոտ է արիական լեզուներին: Պրոֆ. Ղափանցյանը ևս հավաստում է, որ հայերենի և փուլագրերի մերձակցության առասպելը քաղաքական նկատառումներով ստեղծել են հույն պատմագիրները: Հույն պատմիչների անստույգ տեղեկությունների հիման վրա հնգվորոպական լեզվաբանության և պատմագրության շատ ներկայացուցիչներ ենթադրում են, թե հայերը Բալկաններից կամ այսպես կոչված նախահայերներից են եկել և իբրև ձևավորված ժողովուրդ տեղավորվել իրենց նոր հայրենիքում: Այնքան տեղեկացիորդ են եղել այդ կարծիքի հեղինակները, որ նույնիսկ армен տերմինը վերցրել են հունական և ոչ թե նրա ավելի հին՝ армина ձևով: Պրոֆ. Ղափանցյանի վկայությամբ նրանք հաշվի չեն առել նաև

¹ Հույն պատմիչների տեղեկացիություն մասին վկայում են նաև Բ. Բ. Պրոտորովսկին («О происхождении армянского языка», 1946), Հ. Մանանդյանը և ուրիշները:

arim, aram էթնիկական տերմինները, որոնք այսօր անտես են անցնում և Տիգրիսի վերին հոսանքի պատմական վայրերում, ուր սկսվում է հայ էթնոսի կազմավորման պրոցեսի ավարտական փուլը:

Հայ ժողովրդի կազմավորման մասին պրոֆ. Գր. Ղափանցյանի արտահայտած տեսակետների ամենաուշագրավ կողմերից մեկն այն է, որ հայ ժողովրդը չի բերվում նախահայրենիքից, այլ կազմվում է իր բնօրրանի հետ: Նա համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենահին ժողովուրդներից մեկը, որը դեռևս մեր լիակատարությունից տասնհինգ դար առաջ ստեղծում է ցեղային ուժեղ միություն հայասցիների (այսինքն՝ հայերի) գլխավորությամբ, հաջորդությամբ դիմագրում է խեթական թագավորության ասիական տիրակալների քաղաքականությանը, պահպանում իր գոյությունը և մ.թ.ա. 1200—700 թթ. իր մեջ է ձուլում խեթական շատ ցեղերի՝ յուրացնելով նրանց կուլտուրան և լեզվական շատ իրողություններ:

Պրոֆ. Գր. Ղափանցյանի հետազոտությունները գալիս են մի անգամ ևս հաստատելու, որ չի կարելի հայ ժողովրդի կազմավորման ու զարգացման հարցերը լուծել առանց նկատի ունենալու այն պատմական պայմանները, որոնց մեջ ապրել են նախահայկական ցեղերը: Այդ ցեղերը մեր թվականությունից վեց-յոթ դար առաջ, երբ ստեղծվել են նպաստավոր պայմաններ, համախմբվել են նոր տիպի միավորումների մեջ, հզորացել տնտեսապես ու քաղաքականորեն, համախմբելով աստիճանաբար ի մի են ձուլել իրենց ենթակա ցեղերին, լայնացրել սեփական տիրապետության շրջանակները և մ.թ.ա. 7-րդ դարի սկզբին (612) դաշն կապած միդացիների հետ, կիմերական ու սկյութական ցեղերի աջակցությամբ հաջող մարտեր են մղել Ասորեստանի դեմ: Հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում նրա մեջ ձուլված ազգակից և ոչ ազգակից ցեղերը, ինչպես հաղորդում է Ստրաբոնը, մեր թվականության առաջին դարում արդեն միավորվել են դարձել:

Հայ ժողովրդի կազմավորման մասին պրոֆ. Գր. Ղափանցյանի արտահայտած կարծիքները համընկնում են սովետական շատ պատմաբանների տեսակետներին: Վերջին շրջանում լույս տեսած պատմական մի շարք հետազոտություններում համոզիչ փաստերով ցույց է տրված, որ հայ էթնոսը կազմավորվել է մ.թ.ա. 8—2-րդ դարերում, երբ քայքայվել են տոհմատիրական կարգերը և ձևավորվել է դասակարգային հասարակությունը: Հայ էթնոսի կազ-

մավորման հիմքում ընկել է Հայաստան-արմենական ցեղային միությունը, որին մեղացիները կոչել են առմեններ, իսկ նրանց երկիրը՝ Արմենիա: Այդ անվանումները մեղացիներից անցել են հույներին, ապա վերջիններիս միջոցով տարածվել ամենուրեք: Բայց հայերը պահել են իրենց իսկական հայ-հայապա անունը, որի մասին հիշատակություններ կան մեր թվականությունից 15 դար առաջ գրված խեթական արձանագրություններում:

Հայերը իրենց դարավոր պատմության ընթացքում շփվել են տարբեր ցեղերի հետ, ազդել են նրանց վրա և ազդվել նրանցից: Այդ սերտ հարաբերությունները իրենց արտացոլում են գտել հայոց լեզվում, հայկական տեղանուններում, պաշտամունքի ու սովորությունների մեջ: Հայերը բազմաթիվ բառեր են փոխ առել բնիկ լեզուներից: Այսպես, օրինակ, խեթերենից, պրոֆ. Ղափանցյանի հավաստմամբ, հայերենին են անցել բազմաթիվ բառեր դեռևս մեր թվականությունից 10—15 դար առաջ, դրանցից են՝ աղանդեր, բարգավաճել, հախուռն, մզավանջ, խառնել, ուրդ և այլն: Սակայն բացի փոխառած բառերից հայերենում և խեթերենում պահպանված են ընդհանուր մի շարք արմատներ, որոնք ցույց են տալիս, որ այդ երկու լեզուները դարեր շարունակ ապրել են կողք կողքի, շփվել են միմյանց հետ, ներգործել իրար վրա և կրել տարբեր ազդեցություններ: Այդ ընդհանուր բառերից են՝ հատանել, խանդ, խանձել, հասկ, հյուղ, խողխողել, հանի, հպառակ, խոկալ, խելք, հանել, խաղ, խումբ, սար, սպանդ, սարք, երեսք, իշխել, սկիզբ, անգոսնել, կարիք, կարթ, քորել, թողուլ, տառապել, յառնել, բովել, փետուր, ճիվաղ, խարխարել, ավասիկ, ավադիկ, ավանիկ և այլն:

Պրոֆ. Գր. Ղափանցյանը հայերենի և խեթերենի բառապաշարային ընդհանրությունները բաժանում է մի քանի խմբերի. ա) այնպիսի բառեր, որոնք հայերենն ու խեթերենը փոխ են առել տարբեր լեզուներից, բ) խեթերենից հայերենին անցած բառեր, գ) հայերենից խեթերենին անցած բառեր, դ) խեթերենի և հուրերենի բարբառներից մնացած ընդհանուր բառեր:

Հիշված և ընդհանրապես հայերենի ու խեթերենի ընդհանուր բառարմատների զգալի մասը հնդեվրոպական ծագում ունի, թեև այդ մասին չի խոսում պրոֆ. Ղափանցյանը:

Նկատի ունենալով հայերենի և փոքրասիական լեզուների միջև նկատված բառապաշարային ու քերականական ընդհանրությունները, պրոֆ. Գր. Ղափանցյանը հայ ժողովրդի և հայերենի պատմության հարցերը քննում է Հայկական

¹ Հմմտ. Շաշ ժողովրդի պատմություն, մասն առաջին, 1936, էջ 30—37:

լեռնաշխարհի բնիկ ժողովուրդների ու նրանց լեզուների պատմության հարցերի միասնության մեջ: Նա ցույց է տալիս, որ հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմությունը սերտորեն կապված են միմյանց հետ, որ հայերենը հայաստանի պատմական ասպարեզ գուրս գալու ժամանակաշրջանից սկսել է հարստանալ ու մշակվել, որ նա սերտ հարաբերությունների մեջ լինելով խեթերների, քալայերների, ինչպես նաև կովկասյան և ուրարտական պետության իշխանության տակ գտնված այլ ժողովուրդների լեզուների հետ չուրացրել է այդ ազգակից և ոչ ազգակից լեզուների տարրերը և հղվել ու կատարելագործվել է այն աստիճան, որ մ. թ. ա. երրորդ-կրկրորդ դարերում կարողացել է լրիվ շափով բավարարել հայ պետականության պաշտոնական լեզվի բարձր պահանջները:

Պրոֆ. Գր. Ղափանցյանը հայ ժողովրդի կազմավորման ընթացքը ուրվագծելուն զուգահեռ շոշափում է նաև բնիկ ժողովուրդների պատմության մի շարք պրոբլեմներ, երբեմն հաջողությամբ մեկնաբանում գրաքննության և դրանով իսկ ընդլայնում իր հետազոտությունների շրջանակները: Այդ առումով էլ նրա աշխատությունները դուրս են գալիս հայագիտության սահմաններից և արժարժում են ընդհանուր պատմության ու լեզվաբանության պրոբլեմատիկ հարցեր:

Իր հետազոտությունների մեջ պրոֆ. Գր. Ղափանցյանը քննարկում է նաև լեզվաբանության կարևորագույն պրոբլեմներից մեկը՝ լեզուների ազգակցության հարցը: Նվազ գեպում էլ նա փորձում է չուրահատուկ տեսանկյունով մոտենալ ինչպես լեզուների ազգակցության, նույնպես և նրանց մեջ նկատված բնահանրությունների, լեզուների խաչավորման, փոխադրեցության և այլ հարցերի մեկնաբանմանը: Հասկապես հայոց լեզվի բնույթը պարզելու համար նա լեզվական փաստերի հետ միասին ոգտագործում է նաև պատմական, պաշտամունքային և ազգագրական տվյալներ, որոնք հնարավորություն են բնծեղում նրան մի շարք հարցերի նկատմամբ անելու ուշադրավ եզրակացություններ: Սակայն աչդուհանդերձ հայոց լեզվի բնույթի մասին իր աշխատության տարրեր բաժիններում պրոֆ. Գր. Ղափանցյանը տարրեր, երբեմն նույնիսկ հակասական տեսակետներ է պաշտպանում: Այսպես, օրինակ, նա ճշմարտացի է՝ ժխտելով հայերենի և փոնտիկերենի սերտ մերձակցության վարկածը, ինչպես նաև արմեն բառի և Armenion կամ Ormenion լեռան, հին հռոմեական Armenita գետի, Հյուսիսային Իտալիայում եղած Ariminum քաղաքի և այլ համահնչյուն անունների կապը, սակայն նա սխալվում է, երբ հայտարարում

է, թե հայերենի հնդեվրոպական տարրերը (որոնք նրա կարծիքով 400 բառից և հայերենի ձևական մասնիկների կեսից ավելին չեն), երկրորդական, սպասարկու դեր են կատարում և առաջացել են հնդեվրոպական հին ցեղերի ու բնիկ հայերի լեզուների բարդ խաչավորման ճանապարհով¹, թե հայերենի փոքրասիական սուբստրատը ակնբախ կերպով գերակշռում է բոլոր մնացած տարրերին, թե հայերենը ցեղակից է վրացերենին² և այլն: Սակայն գրախոսվող գրքի տարրեր էջերում պրոֆ. Գր. Ղափանցյանը հերքում է իր այդ պնդումները: այսպես, օրինակ՝ մերժելով ն. Մառի այն կարծիքը, ըստ որի հայերենի ոչ հնդեվրոպական տարրերը կազմում են նրա հիմնական կորիզներից մեկը, նա պնդում է, որ հայերենի «հնդեվրոպական տարրերը ծագումնաբանական տեսակետից հիմնական ու որոշիչ են: Այլ կերպ ասած, հայերենը չի կարելի համարել հավասարաշափ խառնված լեզու, ինչպես այդ անում էր ն. Մառը, որովհետև մոտավորապես նման երևույթ է նկատվում Փոքր Ասիայի այլ ազգանիկ լեզուների (խեթերների, խուրիտերների, ուրարտերների, լիկիերների և այլն) մեջ, որտեղ համադրակցում են ծագումնաբանական տարրեր տարրերը՝ այս կամ այն լեզվի ծագումնաբանական հատկանիշների գերակշռումով»³: Այս եզրակացությանը պրոֆ. Գր. Ղափանցյանը հանգել է երկար որոնումներից հետո: Իր «Հայաստան հայերի բնօրրան» աշխատության նախկին հրատարակության մեջ նա գեուհա համառ կերպով պաշտպանում էր ն. Մառի կարծիքը հայերենի երկակի բնույթի մասին և երբեմն էլ ընդգծում էր ազգանիկ տարրի նկատի ունենալով հայերենի բառապաշարի բանական կոզմը, նա գտնում էր, որ հայերենի փոխառությունների հնդեվրոպական արմատների ու մասնիկների բացառման դեպքում կմնա մոտ հինգ հազար բառ և երբ տասնյակ բառակազմական ու թերման ձևերը, որոնք էլ հենց կազմում են հայերենի հիմնական կմախքը կամ որակը որոշող կորիզը, իսկ հնդեվրոպական շերտը ծագումնաբանական տեսակետից հանդիսանում է երկրորդական սպասարկու, թեև կարևոր տարր⁴:

Նոր հրատարակության մեջ, ինչպես տեսանք, նա լրիվ շափով փոխել է իր այդ կարծիքը և

¹ Գր. Ղափանցյան, Պատմա-լեզվաբանական աշխատություններ, էջ 169:

² Նույն տեղում, էջ 248:

³ Գր. Ղափանցյան, Պատմա-լեզվաբանական աշխատություններ, էջ 79:

⁴ Դր. Капанцян, Хайаса — кочыбелъ армян. էջ 79:

Հայերենի հիմնական ու որոշիչ տարրը համարել է հնդեվրոպականը: Ընդունելով հայերենի հնդեվրոպական բնույթը և հրաժարվելով իր սկզբնական կարծիքներից՝ պրոֆ. Գր. Ղափանցյանը մի քայլ ևս պետք է կատարեր փոքրասիական լեզուների իրողությունների արժեքավորման տեսակետից, բայց վաղաժամ մահը զրկեց նրան այդ հնարավորությունից:

Պրոֆ. Ղափանցյանը մանրամասն ուսումնասիրել է հայերենի և խեթերենի սերտ ազդեցությունները, որոնք դալիս են նոր փաստերով հաստատելու հայերենի և խեթերենի հնդեվրոպական բնույթի մասին եղած տեսակետը: Պրոֆ. Ղափանցյանի հավաստմամբ, խեթերենի բառապաշարի մոտ տասը տոկոսը, իսկ խոնարհման, հոլովման մասնիկներն ու բառակազմական ածանցները մեծ մասամբ հնդեվրոպական են, այդ նշանակում է, որ խեթերենը իր քերականական համակարգով հնդեվրոպական է: Այդ են ցույց տալիս նաև հայերենի ու խեթերենի այն բնահանուր տարրերը, որոնք թվարկում է պրոֆ. Գր. Ղափանցյանը: Նրա ցույց տված 70 բնահանուր բառարմատների ավելի քան 40 տոկոսը հնդեվրոպական ծագում ունի, օրինակ՝ խանդ, հիւլ, հան (մեծ մայր), հանել, խազ, սար, սարել, երես, կարթ, բորել, թուր, խառնել, ապա, մալել, թափուր, բովել, փերթ (կտոր), աւասիկ, աւանիկ, աւաղիկ և այլն:

Հայերենի և խեթերենի քերականական ընդհանրությունները պրոֆ. Գր. Ղափանցյանը առաջացած է համարում խեթերենի ու հայերենի փոխազդած խաչավորման և ներթափանցման հետևանքով: Պետք է ասել, որ հեղինակի այդ տեսակետը չի հաստատվում իր իսկ բերած փաստերով: Նա նշում է հայերենին և խեթերենին բնահանուր բառակազմական մի շարք ածանցներ՝ աղ (ող), (ծնաղ, գրող), ումն (շարժումն, ուսումն), ուստ (գալուստ, թարուստ), իւղ (երկիւղ, բնծիւղ), ուն (պարկուճ, բրդուճ), ին (կտրիճ, դահիճ) և այլն՝ մոռանալով, որ դրանց գերակշռող մեծամասնությունը հնդեվրոպական ծագում ունի: Նույնը կարելի է ասել նաև հոլովական ու բայական վերջավորությունների մասին: Պրոֆ. Ղափանցյանը ցույց է տալիս, որ հայերենի գերանունների մի շարք հոլովակազմիչներ, ինչպես՝ տրական հոլովի ա, հոգնակի բացառականի զ, ցուցական գերանունների իկ ածանցը, բայական զիմալին մի շարք վերջավորություններ, ինչպես՝ ներկալի առաջին դեմքի մ, երկրորդ դեմքի ս, երրորդ դեմքի չ (ի) իրենց համապատասխանությունները ունեն խեթերենում: Բայց այդ վերջավորություններն ու ածանցներն իրենց համապատասխանությունները ունեն նաև հնդեվրոպական բնույթի մյուս լեզուներում:

Այդ փաստերից բխում է, որ ինչպես հայերենը, նույնպես և խեթերենը, ինչպես ցույց են տվել շատ հետազոտողներ, իրենց բառապաշարի որոշիչ կորիզով և քերականության համակարգի հիմնական գրեթե բոլորով հնդեվրոպական են:

Այսպիսով, պրոֆ. Գր. Ղափանցյանի պատմա-լեզվաբանական աշխատությունները ամենից առաջ օգնում են ավելի բազմակողմանիորեն ուսումնասիրելու հայ ժողովրդի գոյացման ու զարգացման ընթացքը, պարզարանելու նախահայկական ցեղերի կառարած դերը հայ ժողովրդի պատմական կյանքում և բացահայտելու հայ ժողովրդի ու Հայկական լեռնաշխարհի հնագույն ժողովուրդների կուլտուրայի ու պաշտամունքի առնչակցությունները:

Երկրորդ, որոշելու հայ էթնոսի կազմավորման մեջ որոշիչ դեր կատարած ցեղերի պատմության հիմնական ուղեգծերը, խմանալու պատմական այն պայմանները, որոնց մեջ ապրելով նրանք կարողացել են հաջողությամբ դիմադրել խեթական պետության ասիմիլյատորական քաղաքականությանը և դարեր շարունակ պահպանել իրենց ինքնուրույնությունը, մինչև որ հնարավորություն են ստացել ձևավորվել իրենց էթնիկական ուժեղ միավորում:

Երրորդ, նոր տվյալներով հաստատելու, որ հայ էթնոսը կազմավորվել է Հայկական լեռնաշխարհում, որ նրա կորիզը կազմող բնիկ ցեղերը կիմերա-սկյութական ցեղերի արշավանքներից շատ ու շատ առաջ զարգացման բարձր աստիճանի վրա են գտնվել:

Չորրորդ, ցույց տալու այն պատմաբանական սխալը, որոնք ճիշտ չմեկնաբանելով արմեն տերմինը և անվերապահորեն բնորոշելով հույն պատմիչների այդ մասին տված անստույգ տեղեկությունները, փորձել են միայն մի տերմին նկատի ունենալով՝ որոշել հայ ժողովրդի ծագումնաբանական հարցերը:

Հինգերորդ, բացահայտելու հայոց և բնիկ ժողովուրդների լեզվական առնչակցությունները: Հայերենը իր դարավոր պատմության բնութագրում խաչավորվել է Փոքր Ասիայի բնիկ ժողովուրդների հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուների հետ և նրանցից համալրել է իր բառապաշարը, նրանց ազդեցությամբ որոշ փոփոխություններ մտցրել իր հնչյունական կազմի և քերականության մեջ, բայց երբևէ չի փոխել իր հնդեվրոպական բնույթը: Չնայած, որ պրոֆ. Ղափանցյանի աշխատությունների մեջ այդ հարցի մասին հակասական տեսակետների կարելի է հանդիպել¹, բայց նյութի օրյակտիվ

1 Պրոֆ. Գր. Ղափանցյանի տեսակետների այդ հակասությունը նշում է նաև Ի. Գիսկունովը Հայկական ՄԱԽ ԳԽ հաս. բա-

քննությունը և լեզվական հարուստ փաստերի բացահայտումը կարող են օգնել մասնագետին:

ժանուշությունը 1956 թ. № 11 Տեղեկագրում գե-տեղիված հոդվածում: Նա իրավաբանական մատ-նանշում է պրոֆ. Եր. Ղափանցյանի մի շարք ստույգ արանությունների կասկածելի լինելը, թեև այդ հարցում երբեք ծայրահեղությունների մեջ է բնկնում:

Քննությունը՝ ճիշտ հասկանալու հայերենի և բնիկ այլ տեղանունների առնչակցությունները:

Ի վերջո պետք է ասել, որ պրոֆ. Գր. Ղա-փանցյանի «Պատմա-լեզվաբանական աշխա-տություններ»-ի ժողովածուն շատ կշահեր, եթե օժտվեր գիտական անհրաժեշտ ապարատով՝ առարկայական և ստուգաբանված բառերի ու մասնիկների ցանկերով:

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

«Մանր ժամանակագրություններ 13—18-րդ դդ.», կազմեց Վ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, հատ. 1-ին, Երևան, 1951, 453 էջ, հատ. 2-րդ, Երևան, 1956, 684 էջ:

«Նյութեր հայ ժողովրդի պատմության» քննադատությունը սերիայով Հայկական ՍՍՌ Գի-տությունների ակադեմիայի Հրատարակու-թյամբ լույս է տեսել Վ. Հակոբյանի «Մանր ժամանակագրություններ 13—18-րդ դդ.» երկ-հատորանոց ծավալուն ժողովածուն՝ մի արժե-քավոր աշխատություն, որն արտացոլում է մեր ժողովրդի անցյալի պատմության կարևորա-գույն էությունները: Այդ տարեգրությունները, ինչպես ասված է ինտրոդուկտի կողմից կցված առաջաբանում, «տեղանային և ժամանակակից անձնավորությունների կողմից են կազմված, որոնք մեծ չափով լրացնում են հատկապես 14—16-րդ դարերի հայ ժողովրդի պատմության ինչ լուսարանված էջերը» (հատ. 1-ին, էջ 5):

Գտնվելով Արևելքի և Արևմուտքի քաղաքա-նային ճանապարհների հանգուցակետում, Հա-յաստանը դարեր շարունակ թատերաբեմ է հանդիսացել օտար նվաճողների համար: Եր-կիրը սխառնատիկ առաքատակությունների ու ավերումների է ենթարկվել հոների, պարսիկ-ների, հուսիսայինների, արաբների, բյուզանդա-յիների, սելջուկների, մոնղոլների և, վերջա-պես, օսմանյան թուրքերի կողմից: Մեկը մյուսին հաջորդող այդ նվաճողները կործանե-ցին հայոց հինավուրց քաղաքներն ու գյուղե-րը, ոչնչացրին ժողովրդի զգալի մասը:

Այսպիսով, Հայաստանը մասնատվեց և բա-ժանվեց իր հարևան հզոր տերությունների միջև: 14-րդ դարից սկիզբ առան հայ ժողո-վրդի պատմության ամենազաժան ու մռայլ աշխատանքները, որոնց ընթացքում կոր-ծանվեցին հայ ժողովրդի մշակույթի հիմնա-կան օջախները: Օտար նվաճողների ճիրաննե-րում աստատվող հայ ժողովուրդը, զրկվելով իր զարգացման հնարավորությունից, սկսեց ան-

կում ապրել: Այդ շրջանում մենք ալլեա շու-նենք այնպիսի հայ պատմիչներ ու մատենա-գիրներ, ինչպիսիք ունեինք 5—13-րդ դարերում: Հեթում Պատմիչը տառերերերորդ դարի վեր-ջին աչքի բնկնող հեղինակներից մեկն էր, որն իր «Պատմություն թաթարաց» գրքով հանդես եկավ օտար աշխարհում և հենց նրանով էլ ավարտվում է միջնադարյան հայ պատմագի-րների փայլուն համաստեղության շարքը:

Եվ ահա, ժամանակագիրներն ու տարեգի-րներն են, որ մասամբ լրացնում են հայ պատ-միչներին:

Իրավացի է բնկ. Վ. Հակոբյանը, երբ գրում է.

«Պատմագրության մե տեսակն է ժամանա-կագրությունը, տարեգրությունը, որոնք նույն-րան հին են, ինչպես և պատմիչների աշխա-տությունները: Ժամանակագրությունը, ինչպես նաև տարեգրությունը, պատմական առանձին է պեղությունները հաջորդաբար շարադրելու մի ձևն է, առանց կապակցության, բնություն և նյութն ամբողջականացնելու գիտավորությամբ» (հատ. 1-ին, էջ 9):

Ժողովածուն կազմողը, բրտնաջան աշխա-տանքի շնորհիվ, կարողացել է ի մի բերել և ամբողջականացնել այդ ժամանակագրությու-նները և կազմել մի սովոր ժողովածու, որը խոշոր նշանակություն ունի ոչ միայն հայագի-տության, կովկասագիտության, այլև Միջին Ասիայի, Մերձավոր Արևելքի, Հարավային Եվրասիայի և Ուկրաինայի ժողովուրդների պատմության համար: Այդ ժողովածուն առանձնապես կարևոր է հայ ժողովրդի տա-րեգրության պատմության ուսումնասիրման և կիրիկիայի հայոց պետականության կազմա-վորման հարցերի լուսարանման համար: